

Հետաքրքրական է բաղդատել այս նիւթը Բեթղեհէմի եկեղեցիին մոզայիքին վրայ ներկայացուած միւննոյն տեսարանին հետ: Ոճի և շինուածքի էական տարբերութիւններ կան այս երկու գործերուն մէջ: Օրինակի համար, Բեթղեհէմիին մէջ՝ Քրիստոս նստած է իշուն վրայ, բայց քուռակը չկայ: Այս զանազանութիւններն աւելի հետաքրքրական են, վասնզի, ինչպէս արդէն դիտուած է (De Vogué «Eglise de la Terre Sainte», էջ 96), Բեթղեհէմիին շինուածքը բացարձակապէս համաձայն է Բիւզանդական հին հրահանգին՝ «առաջնորդ նկարչութեան»՝ որ տարբեր նիւթեր գծագրելու եղանակին նկատմամբ կը պարունակէ մանրամասն կանոններ: Բեթղեհէմի մոզայիքին հեղինակը կը թուի թէ հետեւած է Ս. Յովհաննու, Ս. Մարկոսի և Ս. Ղուկասու մերձաւոր համեմատական պատմուածքներուն, որոնց համաձայն, մին կը գրէ էջ մը, միւս երկուքը՝ աւանակ մը: Միւս կողմէն, մեր արուեստագէտը Ս. Մատթէոսէն ներշնչուած կը թուի:

Բեթղեհէմի մոզայիքը շինողը եւ Բիւզանդական դպրոցը՝ որուն ան կը վերաբերի, Աւետարանչին կողմէն գործածուած բառերը տառացի կը գործածէ, ներկայացնելով Յիսուսը *նսած՝ և ոչ թէ իշուն վրայ հեծած*: Շատ կարեւոր է դիտել թէ այս տառացի մեկնութիւնը խիստ իրաւացի է, վասնզի Ս. Մարկոսի Աւետարանը միւննոյն բառը կը գործածէ, խօսելով իշու մը վրայ, «յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ»

---

սխալով մը յիշուած է որ նոյն բանակը Ս. Յովհաննու եկեղեցիին դրան վրայ դրուած է, մինչ իրականին մէջ դրուած է ան Ս. Գեօրգիանի եկեղեցիին դրան վրայ (P. E. F. 1877, էջ 84 - 85):